

**5.12. Կենդանաբանական այգու գործունեությունը 2000 թվականին**

Ըստ ՀՀ Երևանի քաղաքապետարանի տվյալների, ՀՀ-ում գործող միակ պետական կենդանաբանական այգուն 2001թ. հունվարի 1-ի դրությամբ առկա է եղել 193 տեսակի կենդանի և թռչուն (11.6%-ով ավել, քան նախորդ տարում): Կենդանիների և թռչունների գլխաքանակը կազմել է 2926 նախորդ տարվա 2337-ի դիմաց:

**Կենդանիների քանակը տարեվերջին**

	Տեսակների քանակը		Գլխաքանակը	
	1999	2000	1999	2000
Երկկենցաղ	1	1	1	1
Սողուններ	18	18	141	148
Կաթնասուններ	41	54	502	154
դրանցից՝ գիշատիչներ	24	28	67	60
սմբակավորներ	17	26	98	94
Ձկներ	7	17	156	201
Թռչուններ	71	68	489	508
դրանցից՝ գիշատիչներ	13	13	60	62
Այլ	35	35	1048	1914
Ընդամենը	173	193	2337	2926

Կենդանաբանական այգուն բնակվող 32 տեսակի 104 կենդանիներ և թռչուններ գրանցված են միջազգային «Կարմիր գրքում», իսկ 24 տեսակի 62 կենդանիներ ու թռչուններ՝ Հայաստանի «Կարմիր գրքում»: Նախորդ տարվա համեմատ այս ցուցանիշները փոփոխություն չեն կրել: Եվ միջազգային, և Հայաստանի «Կարմիր գրքերում» ընդգրկված կենդանաբանական այգուն բնակվող կենդանիների քանակի գերակշռող մասը բաժին է ընկել կաթնասուններին՝ համապատասխանաբար 51.9% և 74.2%:

**Կենդանաբանական այգու կենդանիների քանակական շարժը**

	Վերաբնակեցված				Վաճառված		Ծնված		Կենդանիների անկում	
	գնված		այլ ճանապարհով ձեռք բերված							
	տեսակների քանակը	գլխաքանակը	տեսակների քանակը	գլխաքանակը	տեսակների քանակը	գլխաքանակը	տեսակների քանակը	գլխաքանակը	տեսակների քանակը	գլխաքանակը
Երկկենցաղներ	-	-	-	-	-	-	4	18	5	5
Սողուններ	3	7	-	-	-	-	-	-	-	-
Կաթնասուններ	9	28	-	-	10	36	13	14	9	16
այդ թվում՝	6	8	-	-	4	18	4	5	6	9
գիշատիչներ	3	20	-	-	6	18	9	9	3	7
սմբակավորներ	3	20	-	-	6	18	9	9	3	7
Ձկներ	4	53	10	34	-	-	2	8	-	-
Թռչուններ	5	42	-	-	8	65	12	202	8	13
դրանցից՝	-	-	-	-	-	-	-	-	-	-
գիշատիչներ	-	-	-	-	-	-	-	-	-	-
Այլ	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	21	130	10	34	18	101	31	242	22	34

**5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԱԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**

Կենդանաբանական այգու ընդհանուր մակերեսը 8.5 հա է, իսկ կենդանիների համար նախատեսված կառույցների մակերեսը՝ 5.2 հա, որը կազմել է ընդհանուր մակերեսի 61.2%-ը: Կենդանիների համար նախատեսված ձմեռային կառույցների մակերեսը կազմել է 2.0 հեկտար, որը կազմել է կենդանիների համար նախատեսված կառույցների ընդհանուր մակերեսի 38.5%-ը և կենդանաբանական այգու ընդհանուր մակերեսի 23.5%-ը:

Մեկ կենդանուն բաժին է ընկել 17.8 քառ. մ կառույց՝ նախորդ տարվա 22.3 քառ. մ-ի դիմաց: Կենդանաբանական այգու ընդհանուր տարածքի մեկ հեկտարին ընկնում է 344 կենդանի և թռչուն, նախորդ տարվա 275-ի դիմաց:

Այգու աշխատողների ընդհանուր թվաքանակը կազմել է 125 մարդ, որոնցից 101-ը՝ հիմնական, 24-ը՝ պայմանագրային հիմունքներով աշխատողներ են: Աշխատողների ընդհանուր թվաքանակը նախորդ տարվա համեմատ մնացել է նույնը:

2000թ. կենդանաբանական այգի այցելած հաճախորդների թվաքանակը 16.7%-ով նվազել է նախորդ տարվա համեմատ և կազմել 120.0 հազ. (1999թ.՝ 144.0 հազ.): Հանրապետության 1000 բնակչի հաշվով այցելությունը կազմել է 31.5 նախորդ տարվա 37.9-ի դիմաց:

2000թ. ընթացքում կենդանաբանական այգում կազմակերպվել է 2800 անվճար էքսկուրսիա, որի 22.9%-ը՝ դպրոցականների համար (1999թ.՝ 3000 էքսկուրսիա և 24.0%): էքսկուրսիաներին մասնակցել է 86.0 հազ. այցելու, որոնց 55.8%-ը դպրոցականներ (1999թ.՝ 90.0 հազ. այցելու և 82.4%): Կենդանաբանական այգու 7000 այցելուների համար կազմակերպվել է 350 դասախոսություն (1999թ.՝ 7200 այցելու և 48 դասախոսություն):

2000թ. կենդանաբանական այգու ֆինանսական մուտքերը կազմել են 69.4 մլն. դրամ (1999թ. համեմատ այն նվազել է 13.0 %-ով), որոնցից 53.5 մլն. դրամը տրամադրվել է պետական բյուջեից (1999թ.՝ 59.3 մլն. դրամ), 2.0 մլն. դրամը՝ տեղական բյուջեից (3.5 մլն. դրամ), 7.3 մլն. դրամը՝ մուտքի վճարումներից (7.0 մլն. դրամ) և 6.6 մլն. դրամը՝ նվիրատվություններից (10.0 մլն. դրամ): Մուտքի վճարը մեկ այցելուի հաշվով կազմել է միջինը 216 դրամ, նախորդ տարվա 129 դրամի դիմաց:

**Ֆինանսական միջոցների օգտագործումը**

	Ընդամենը, մլն. դրամ	2000թ. ցուցանիշների աճը կամ նվազումը 1999թ. համեմատ (նվազումը «-» նշանով), %
Նյութական ծախսեր	41.3	- 2.1
Ոչ նյութական ծառայությունների վճարումներ	2.8	- 65.4
Գործուղման ծախսեր	0.7	- 30.0
Աշխատավարձի ֆոնդ	18.4	0.5
Փոխանցումներ սոցիալական ապահովագրությանը	3.5	2.9
Կապիտալ ներդրումներ, հիմնավերանորոգման, գույքի և սարքավորումների ձեռք բերման ծախսեր	2.7	- 60.3
Ընդամենը	69.4	- 13.0